

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԲԺ. Բ. ՍՎԵԶԱՐԻՆԿ

Գլու 25 գր.
Цена 25 коп.


1.0

Ձև. 1421

ԻՆՉՊԵՍ ԱՌՈՂՋԱՑՆԵԼ ԿՅԱՆՔԸ ԿՈԼԻԽՈԶՈՒՄ

(Ի՞շխ ՊԵՏՔ Ե ԱՆԵ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ՔԶԻՔԸ ԿՈԼԻԽՈԶՈՒՄ)

Տպագործություն
Առաջնական գործադրություն



ՀՐԱՑԱՐԿՎԱԾՔՅԱՆ
„ՀՅՈՒՍՏԱՑԻՆ ԿՈՎԿԱԱ“
ԹՈՒՍՈՎՀ-ԴՐԱՆ 1932

APM.

A.P.M. B-405a
3-4052 Fd. P. 0462W

614-7
4-84


94

ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋՁԱՑՆԵԼ ԿՅԱՆՔԸ ԿՈԼԻԽՈԶՈՒՄ

(Ի՞նչ դեմք է առև ստուգաբանութեան բարձր կույսութեան)

Surquidig T. U - jw6

HB. No. 22114



ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ
«ՀՅԱԼԻՒՄԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
ԹՈՂՑՈՎ-ԴՈՆ
1932

1932

ԲՈՎԱՆԴԱԿԱՒԹՅՈՒՆ

	Կ
1. Խոչու համար պետք ե առողջապահական բջիջը	3
2. Կոլխոզնիկի սնունդը	13
3. Բնակարանը	18
4. Կոլխոզի բարեկարգումը	22
5. Վարակիչ հիվանդությունների գեմ պայքար	27
6. Մոր և սանկան պաշտպանությունը	30
7. Կոլխոզի հանգիստը	38
8. Սանիտարական լուսավորությունը	42
Վերջաբան	44
Հավելված—Կոլխոզների առողջապահական բջիջների կանոնադրությունը	45



40585-67

1) ԽՆՉՈՒ ՀԱՄԱՐ Ե ՊԵՏՔ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԲՋԻՋԸ

Դյուղը ցնցվեց: Ամբողջ Խորհրդային Միության մեջ նըկատվում ե կոլխոզների բուռն աճումը, վորը գերազանցում ե բոլոր ծրագրներին ու յենթագրություններին:

Դյուղացիության միջակ-չքավոր մասսաներն աշխատում են դուրս գալ դարավոր աղքատությունից, աղատվել ուժից վեր աշխատանքից և ընդհանուր, կոլեկտիվ ուժերով կառուցել նոր, առողջ կյանք:

Այժմ հիմնովեն արմատակիլ ե արվում հին, կծղտութ աղքատիկ կենցաղը: Դյուղի վերակառուցման ընթացքի հետ միաժամանակ ամեն մի կոլխոզնիկ պետք ե մտածի իր առողջությունը պահպանելու մասին:

Հին գյուղը, վորտեղ յուրաքանչյուր գյուղացի ծանրաբենած եր իր ընտանիքի հոգսերով և միմիայն աշխատում եր իր փոքրիկ հողամասում, մեծ քանակությամբ հիվանդներ եր տալիս:

Յարական Ռուսաստանում՝ այսպես կոչված՝ «բարեկեցիկ» ժամանակաշրջանում՝ միմիայն մի տարում, 1912 թ. զանազան վարակիչ հիվանդություններով հիվանդացել են մոտավորապես տասներեք միլիոն մարդ:

Բացի դրանից, գյուղի բնակչության զգալի մասը տառապում եր ստամոքսի բորբոքումով, աղեթափություններով, կանացի և այլ վոչ-վարակիչ հիվանդություններով: Անհրաժեշտ ե ընդգծել, վոր այս հիվանդությունների մեծ տոկոսն ընկնում եր չքավորների, անձի գյուղացիների և բատրակների վրա:

Վերջին տարիներում զրությունը գեպի լավը փոխվեց: Դրան համոզեցուցիչ փաստ կարող ե ծառայել բնակչության մահացության քանակի նվազումը: Որինակ, մինչ հեղափոխություն լենինգրադի նահանգում, ամեն տարի 10,000 բնակչությունից մահանում եր 270 մարդ, իսկ 1928 թվին մահացել ե

միմիայն 188 մարդ, թեև ոյդ բարելավումը դեռ գոհացուցիչ չե. մենք ներկայումս գյուղում ունենք մեծ թվով հիվանդներ. բնակչության մահացությունը, մասնավանդ յերեխաների զջանում, դեռևս մեծ ե:

Ինչնիվ կարելի յե բացատրել այս: ԶԵ վոր զյուղում այժմ հիվանդանոցների թիվն ավելի շատ ե, քան մինչ հեղափոխությունը, իսկ բժիշկների թիվը կրկնապատկվել ե: Նշանակում ե՝ հարցը միայն հիվանդանոցներից ու բժշկվելուց կախված չե:

Բնակչության մահացության և հիվանդության դեպքերը կախված են կյանքի այն պայմաններից, վորոնց մեջ այդ բընակչությունը գտնվում ե:

Ուժից վեր ծանր աշխատանքը, անբավարար և աննորմայ մնունդն ուժապատ են դարձնում մարդուն և նա հաճախակի հիվանդանում ե:

Խոնավ, կեղտոտ բնակարանը թուլացնում ե մարդու առողջությունը և նույնպես նպաստում հիվանդության առաջ դալուն: Կեղտոտված գետի անմաքուր զրհորի ջուրը հաճախակի վարակված ե լինում վորովայնի տիֆի կամ արյունախառն փորհարինքի միկրոբներով և առաջ ե բերում նույն հիվանդությունները: Մի ամանից ճաշելու, իրար համբուրելու, գլանակի (պապիրոսի) մնացորդը բերներերան տալու հետևանքով մարդիկ հաճախ իրար վարակում են թոքախառվ և կամ սիֆիլիսով:

Սյո բոլորից պարզ ե, վոր բնակչության առողջապահությունը պահպանելու համար հարկավոր ե ստեղծել ապրելու և աշխատելու այնպիսի բարեհաջող պայմաններ, վոր հնարավոր լինի կանխել հիվանդությունը և թույլ չտալ նրա տարածվել, յեթե այդպիսին արդեն ծայր ե տվել:

Խորհրդային բժշկությունն աշխատում ե այդպես ել զնելի բործը: Նա հոգ ե տանում վոչ միայն արդեն հիվանդացածին բժշկելու, այլ նաև հիվանդությունը կանխելու մասին:

Սակայն նախադպուշացման այդ միջոցները մինչև հիմա մեծ խոչնոտների ելին հանդիպում, վորովինետե դյուղացիական անհատական տնտեսության ծանր և վատառողջ աշխատանքը, գյուղացիության մեծագույն մասի կուլտուրական հետամնացությունն ու չքափորությունը խոչնոտ ելին հանդիսանում գյուղի լիակատար առողջապահիկ վիճակին:

Այժմ զրությունը փոխվում ե: Կոլխոզների կենցաղի և աշխատանքի պայմանների բարելավման համար ներկայումս

կոլխոզներում հնարավորություններ շատ կան. միայն թե պետք ե կարողանալ ողտագործել այդ հնարավորությունները, պետք ե իմանալ, թե ինչ ե հնարավոր աներ, վորագեսզի առողջացների կոլխոզների կյանքը և թե այդ բոլորն ինչչափ կիրառել կյանքում: Կոլխոզի վարչությունն իր աշխատանքի ընթացքում չպետք ե մոռացության տա այն միջոցառումները, վորոնք անհրաժեշտ են կոլխոզի առողջության համար: Իրենք կոլխոզնիկներն ել թե իրենց առորյա աշխատանքի ժամանակ և թե տանը պետք ե կտտարեն այն բոլորն, ինչ վոր պահանջվում ե առողջությունը պահապնելու համար: Հետեարար անհրաժեշտ ե, վոր կոլխոզնիկների ամբողջ մասսան իմանա հիվանդության առաջն առնելու միջոցները, ընդառաջ գնա կոլխոզի վարչության և կուլտ-կենցաղային կոմիսիայի կողմից կոլխոզի կյանքն առողջացներու համար՝ արված ձեռնարկումներին: Բայց այդ դեռ շատ քիչ ե: Բոլոր կոլխոզնիկները չեն կարող մշտապես հետեւել կոլխոզի սանիտարական վիճակին ու մանկամասուրների աշխատանքներին: Հարկավոր և աշխատանքի լծել այն անձնավորություններին, վորոնք առանձնապես հետաքրքրվում են կոլխոզի աշխատանքի պայմանների և կենցաղի բարեկավման ու առողջացման հարցով: Դրա համար ել կոլխոզներում, կուլտ-կենցաղային կոմիսիաներին կից, կազմակերպվում են առողջապահական բջիջներ:

Կուլտ-կենցաղային կոմիսիան հավաքում և այդ բջիջում աշխատել ցանկացող կոլխոզի անդամներին՝ աշխատանքներն ինչ կերպ տանելու մասին խորհրդակցելու և կարգավորելու համար: Այդ առաջին ժողովում ընտրվում ե բջիջի բյուրո՝ Յ կամ Ծ հոգուց բաղկացած, վորը զեկավարում ե բջիջի աշխատանքները: Բջիջի բյուրոն ընտրում ե նախագահ և քարտուղար, վորոնք հրամինում են բջիջի ընդհանուր ժողովները, նախագահության նիստերը, կապ են պահպանում կոլխոզի վարչության և բժշկական անձնակազմի (պերսոնալի) հետ և այն:

Բջիջն իր աշխատանքների հենց սկզբին պետք ե ծանոթանացների առողջություն ունեցող պահպանների հետ:

Բջիջը պետք ե իմանա, թե ինչպես ե զրված կոլխոզում աշխատանքի պահպանման, ինչպես և մնալի և ջրամատակարարման գործն և այն: Այս բոլորը պարզելուց հետո անհրաժեշտ ե կազմել բջիջի հետագա աշխատանքի պլանը: Պլանային աշխատանքը հանդիսանում ե գործի հաջողության հիմական և

անհրաժեշտ պայմաններից մեկը Զպետք եւ ուշացնել և բանն այստեղ հասցնել, վոր ծայրահեղ կարիքն ստիպի այս կոմայն քայլն անել, այլ հարկավոր եւ նախորոք պարզել կոլխոզի կենցաղի պակասությունները և հատկապես առողջության համար ավելի վտանգավորները և ապա սրանց վերացման խնդիրը մացնել պլանում։ Պլանը համապատասխանելու յեւ իրականությանը, այսինքն հարկավոր եւ նկատի առնել միայն այնպիսի միջոցառումներ, վորոնք կոլխոզի ուժից վեր չեն և նա մոտակա տարում պետք եւ կարողանա իրագործել այն լրիվ կամ մասնակի կերպով։ Վերջապես, բջիջի պլանը կազմելու ժամանակի պայմաններից մեկն ել լինելու յեւ բժշկի կամ նրա ողնականի անմիջական մասնակցությունը։ Բջիջի անդամներն ինքնուրույն կերպով, առանց մասնագետի, լավ չեն կարող հասկանալ, թե բնչպես պետք եւ կառուցել առողջապահիկ պլանը, բնչպես պայքարել զանազան վարակիչ հիվանդությունների դեմ։ բայց դրանից, բժշկը ցույց կտա, թե բնչպիսի հիվանդություններով նրան զիմում են հաճախ և թե ինչ եւ հարկավոր անել՝ այդ ախտերի դեմ պայքարելու համար։

Պլանը նախագծելուց հետո հարկավոր եւ կանոնավոր կերպով կատարել աշխատանքների բաժանում։ Բջիջի ամեն մի անդամին հարկավոր եւ հանձնարարել աշխատանքների մի վորեւ մասի հոգատարությունը։ Որինակի համար՝ մեկը հետեւ կոլխոզի մննդամատակարարմանը, մյուսը՝ մանկամսութիւն աշխատանքներին, յերրորդը՝ բնակարանի դրությանը և այլն։ Բայց սա չի նշանակում, վոր բջիջի անդամներն ուշադրություն դարձնելու յեն։ միմիայն իրենց հանձնարարված աշխատանքների վրա և կարող են մոռացության տալ բջիջի մնացած աշխատանքները։ Գործի այդպիսի դրվագքն ուզգի չեր լինի։ Բջիջի յուրաքանչյուր անդամը պարտավոր եւ հետաքրքրվել բոլոր աշխատանքներով և մասնակցել բջիջի բոլոր նիստերին, վորոնք նվիրված են զանազան հարցերի քննարկմանը։ Կարիք յեղած գեպքում նա կատարելու յեւ իրեն հանձնարարված բոլոր տեսակի աշխատանքները, բայց առավելապես տանում եւ միայն մի աշխատանք և պատասխանառու յեւ աշխատանքի կատարման համար։ Բջիջի նիստերը, ինքնըստինքան պարզ եւ, վոր դոնքաց են լինում։

Անհրաժեշտ ե, վոր կոլխոզի ամեն մի անդամը հնարավորություն ունենա ներկա լինելու այդ նիստերին և քննարկված հարցերի մասին հայտնի իր կարծիքը։ Բջիջի ժողովները միջին

հաշվով հարկավոր եւ հրավիրել յերկու շաբաթը մեկ անգամ։ Բջիջի աշխատանքներում կոլխոզնիկների ուշադրությունը գրավելու համար ոգտավետ եւ նրա նիստերը գումարել կամ Խրճիթ-ընթերցարանում, կամ ակումբում, վորպեսզի կոլխոզնիկները գոնե պատահաբար ներկա լինեն և մասնակցեն բջիջի աշխատանքներին։ Բայց դրանից, բջիջները տարին յերկու անգամից վոչ պակաս իրենց կատարած աշխատանքների մասին հաշվետու յեն կուլտ-կենցարային կոմիսիայի և կոլխոզնիկների ընդհանուր ժողովի առաջ կատարած աշխատանքներն ստուգելու և հետագա աշխատանքների նկատմամբ ցուցմունքներ ստանալու համար։

Այդպիսավով բոլոր կոլխոզնիկներն իրենց բջիջների միջոցով մասնակցում են կոլխոզի առողջապահիկ աշխատանքներին և իրագործում են խորհրդային բժշկության լողունգը—«աշխատավորների առողջությունը—իրենց՝ աշխատավորների գործն ե»։

Ի՞նչ պետք եւ անի առողջապահական բջիջը՝ կոլխոզում կյանքն առողջացնելու համար։

Նա պետք եւ ուշադրության առնի նախ։

1) Աշխատանքի առողջացումը կոլխոզներում։ Գյուղացիական աշխատանքն անհատական տնտեսություններում շատ վրա նաև կողմեր ունի, Գյուղացին հաճախ դեռ արորով եւ վարում։ Նա դեռ ձեռքով եւ ցանում, քաղում և կալում։ Այսպիսի աշխատանքը նրանից պահանջում եւ շատ մեծ եներգիա ու ակերպ ժամանակի վատնում։

Գյուղատնտեսական մեքենաներն, ինչպես ցանող ու կալող մեքենան և այլն, ել չենք խոսում կոմրայնի* և տրակառի մասին, շատ քիչ եներգիա յեն պահանջում և նապատում են աշխատանքների արագ կատարմանը։ Սակայն նման մեքենաներ չքափոր տնտեսություններում համարյա չկան, իսկ միջակ տնտեսություններում շատ քիչ են։ Յեկ դա շատ հասկանալի յեւ։ Փոքր, սակագաղոր տնտեսությունը միջոցներ չունի նման մեքենաներ գնելու։ Բայց դրանից, այդ մեքենաները միայն մենատնտես գյուղացու հողամասում իրենց չեյին արդարացնի, այսինքն շատ թանկ կնստելին, վորովիետե դրանք, այդ մեծ մեքենաները, կմնան տնտեսություններում անգործ, դրանք հարկավոր չափով աշխատանք չեյին ունենա կատարելու, այսինքն մի որ կաշխատելին, իսկ ամբողջ տարին առանց գործի կանդ կառնելին։ Դրա համար մենատնտես գյուղացին ստիպված եւ լինում հույսը զնել միայն սեփական ուժերի վրա և

*.) Մեքենա, վոր միաժամանակ քաղում ու կալում եւ,

ամառվա ամիսները նա իր ամբողջ ընտանիքով աշխատում է փաղ առավոտից մինչև ուշ յերեկօ, վորսվիետև աշխատանքի ժամանակամիջոցը քիչ եւ և յեթե ամառն ամբողջ աշխատանքը չի վերջացնի, ձմեռը քաղցած կմտ:

Զարմանալի չե, վոր զյուղացիությունը դեռ հին ժամանակներից ամառվա ամիսները տանջանքից ամիսներ եւ անվանում: Այդպիսի ուժից վեր և լարգած աշխատանքն ուժասպառ ե անում զյուղացուն և թուլացնում նրա առողջությունը, իսկ թուլացած որդանիզմը ռեշտությամբ յենթարկվում ե այս կամ այն հիվանդության:

Այս դեռ բոլորը չե: Գյուղացին պետք ե ժամանակին վերջացնի փարը, քաղը, խոտհունձը և այլն:

Աշխատող ձեռքերը քիչ են, մեքենաների մասին խոռելն ել ավելորդ ե, ուստի և զեղջկումն տղամարդու հետ հավասարապես բոլոր տեսակի ծանր աշխատանքներ եւ կատարում թե հզի ժամանակ և թե ճննդաբերությունից յերկու-յերեք որ հետո, վորպիսի աշխատանքը չափազանց վատ ե ազդում կտնանց առողջության վրա:

Մանր տնտեսության մեջ նշանավոր չափով տուժել ե նաև անշափահամների առողջությունը: Ժամանակը չի սպասում, պետք ե վերջացնել աշխատանքը և անշափահամներն ել մեծերի հետ հավասարապես կատարում եյին բոլոր անհրաժեշտ աշխատանքները: Այդ բանը չափազանց ազդում եր անշափահամի մատադ, դեռ չամրացած որդանիզմի վրա և դրա հետեւ վանքով քիչ չեր վոխտ և թուլակողմ մարդկանց թիվը զյուղում:

Շատ բան կարելի յեր ասել զյուղացու աշխատանքի վասակարության մասին, բայց մենք մանրամասնությունների մեջ խորանալու միտք չունենք: Բավական եւ և այն, վոր վեռում նշեցինք՝ պարզելու համար, թե ինչպես անհատական տնտեսության աշխատանքը խորապես անդրադառնում ե աշխատավոր զյուղացու առողջության վրա:

Այլ պատկեր են ներկայացնում կոլխոզները:

Այստեղ մենք զործ ունենք խոշոր տնտեսությունների, մեծաքանակ հողերի և բազմաթիվ լծկանների հետ: Կոլխոզները չի կարելի համեմատել, մանր տնտեսությունների: Հետ այստեղ զյուղատնտեսական մեքենաները միշտ գործի յեն, պարտապ չեն մնում և, իհարկե, իրենց արդարացնում են: աշխատավոր ձեռքերն ավելի յեն—և այս բոլորը հեշտացնում ե ամեն մի աշ-

խատավորի գործը, քանի վոր հարկավոր չե նրան չափից գուբս ուժ գործ դնել, հոգնատանջ աշխատանք կատարել:

Կոլխոզներում դժվար չե աշխատանքի բաժանում կատարել, այսինքն յուրաքանչյուր կոլխոզնիկն տալ իր ուժերին համապատասխան և հարմար աշխատանք: Հասակավոր աղամարդկանց տալիս են ավելի ծանր և բարդ աշխատանք, իսկ կանանց, մանականդ հղիներին ու անշափահամներին, նրանց ուժերի համապատասխան, ավելի թեթև աշխատանքներ են առլիս: Աշխատանքի այդպիսի կազմակերպումից շահում ե թե կոլխոզի անտեսությունը և թե կոլխոզնիկի առողջությունը:

Առողջապահական բջիջը պետք ե լրիկ: ոգտագործի կոլխոզներում, աշխատանքի առողջացման գործում դեր խաղացող բոլոր հնարավորությունները: Առողջապահական բջիջը, կուլտ-կենցաղային կոմիսիայի միջոցով, պետք մեծ ջանք գործ դնի, վորպիսզի կոլխոզում տղամարդկանց, կանանց և անշափահամների մեջ աշխատանքները համապատասխան կերպով բաժանվեն:

Ծի քանի կոլխոզներում, հատկապես մեծ կոլխոզներում, դա արգեն կիրառվում է կյանքում: Մնացած կոլխոզներում առողջապահական բջիջը պետք ե հարց հարուցի կոլխոզների վարչությունների առաջ և ապացուցի, վոր իրոք աշխատանքի ուղիղ բաժանումը վոչ միայն ապահովում ե աշխատավարձների առողջությունը, այլև չափազանց ոգտավետ ե հենց իրեն՝ անտեսությանը: բացի դրանից, վորոշ գեղքերում տուրերկույզ, սրտի արաւու և այլ հիվանդություններով բռնվածներին նա պետք ե առ ամենաաթեթև աշխատանք: Նման հիվանդները բժիշկներից ստանալու յեն համապատասխան վկայականներ իշխեց ունեցած հիվանդության և ծանր աշխատանքներից նրանց ազատելու անհրաժեշտության մասին: Յեկ բջիջն ել պետք ե ոգնի, վոր նման կոլխոզնիկներն ավելի թեթև աշխատանք ըստանան: կոլխոզներում պետք աշխատանքներ շատ կան, այնպես վոր այդ բանն անել բոլորովին դժվար չե:

Բացի աշխատանքի ուղիղ բաժանումից, կարենը և նաև ստեղծել աշխատանքի ավելի նպաստավոր և առողջարար պայմաններ: Փոքրիկ կոլխոզները մինչեւ այժմ դեռ ոգտագործում են նախկին անհատ տնտեսություններից մնացած, հին ձեր, միացող ոջախ ունեցող մարագներն ու սարացները: Ամբողջապես ծխով լիքն են այն կացարանները, վարտեղ աշխատանքները:

Այդ բանը շատ վատ ե ազդում աշխատավորի առողջության վրա, փորովինետև ծխից մասվում են աչքերը և առաջ գալիս կոկորդի և թոքերի գրգիռ: Յեթե կովսոզը դեռևս միջոցներ չունի լրիվ կերպով վերասարքավորելու ամրող տնտեսությունը, այն ժամանակ առողջապահական բջիջը պետք ե հետամուտ լինի, փոր ծխացող վառարանների (թոնիրների) տեղ շինվեն ծխանցք ունեցող վառարաններ, փորով և ավելի սակավ կիմնեն աշխատավորների առողջության խանգարման գեպքերը:

Նմանապես կոլխոզնիկներին կալմելու ժամանակ փոշի կուլ տալուց ազատ պահելու համար՝ առողջապահական բջիջը համառօրեն պետք ե հետամուտ լինի, փորպեսզի կալմելու աշխատանքները տեղի ունենան լավ տափտափած, կավաճատակ, բաց հրապարակներում: Իսկ յեթե կալմելու աշխատանքներն անհրաժեշտաբար կատարվելու յեն փակ տեղերում, այդ դեպքում հարկավոր ե հարց հարուցել կոլխոզի վարչության առաջ հակափոշական դիմակներ գնելու համար: Աշխատանքն առողջացնող այդպիսի շատ որինակներ կարելի յե բերել նույնիսկ փոքրաթիվ մեքենաների տեր, մանր, սակավազոր կոլխոզներից:

Առողջապահական բջիջը բժշկի հետ միասին պետք ե հետախուզի կոլխոզի աշխատանքների պայմանները, գործնական ցուցմունքներ ուրվագծի այդ պայմանները բարելավելու համար և հետամուտ լինի իր բոլոր առաջադրությունները կյանքում կիրառել:

Գյուղատնտեսական մեքենաներով հարուստ, ընդարձակ կոլխոզներում առողջապահական բջիջի առաջ մի շարք նոր խնդիրներ են ծառանում: Գյուղում, մեքենաների վրա աշխատելիս, մանավանդ բարդ մեքենաների վրա, սակավաթիվ չելին դժբախտության գեպքերը, Գյուղացին մեքենայի վարժ չե, նա չգիտի մեքենայի հետ վարփելու ձեռ, վերջապես, նա դեռևս չունի այն հմտությունն ու ճարպիկությունը, փոր ժամանակին ձեռք ե բերում հմուտ բանվորը: Առողջապահական բջիջը պետք ե մեծ աշխատանք տանի դժբախտ գեպքերի առաջն առնելու համար: Աշխատանքի ֆողովրդական կոմիտարիատի կողմէ հրատակած ե մեքենաների հետ վարփելու և դժբախտություններից պաշտպանմիելու մասին պարտադիր փորոշում: Այդ պարտադիր փորոշման կետերն առողջապահական բջիջը պետք ե լավ ուսումնասիրի և հետապնդի, փոր նրանք անշեղ կերպով գործադրվեն:

Հարկավոր ե նույնպես հաճախակի բացատրել մեքենաների հետ վարփելու յեղանակը, փորպեսզի այն կոլխոզնիկները, գորոնք աշխատելու յեն մեքենաների վրա, իմանան, թե ինչպես կարող են նրանք գերծ մնալ դժբախտ պատահարներից:

Բայց այդ դեռ բավական չե: Պետք ե հաշվի առնել, փոր սկզբնական ըջանում դժբախտության դեպքերը տեղի ունենալու յեն, հետևապես պետք ե այդ բանին պատրաստ լինել: Առողջությունը վորոշման համաձայն, խոշոր կոլխոզներում, բացի հիմնդանոցից կամ ամբուլատորիայից, պետք ե կազմակերպին ֆելդշերական կետեր, այն վայրերում, ուր մեքենայի վրա շատ մարդիկ են աշխատում: Այդ կետերում դժբախտ գետքեր պատահելիս, ցույց կտրվի անհրաժեշտ ոգնությունը: Հետևապես առողջապահական բջիջը պետք ե ամեն կերպ աշխատի ոգնելու, փոր նման կետերը կազմակերպվեն ու կանոնավոր աշխատեն: Սակայն սրանով հարցը գեռ ամբողջապես չի լուծվում: Գյուղատնտեսական բանվորները ցրված են լինում ահազին տարածության վրա: Աշխատավորների մի խումբը մյոււսից շատ հեռու յե գտնվում, իսկ ֆելդշերական պունկտերը ցանցառ են և դրա համար չի կարելի հուսալ միայն բժշկի կամ ֆելդշերի ոգնության վրա: Դրա հետ միասին պետք ե իմանալ փոր դժբախտ գեպքից վասավողի կյանքն ու առողջությունը պահպանելու համար մեծ նշանակություն ունի բժշկական ոգնությունը: Այսուղից պարզ ե, փոր հարկավոր ե կոլխոզնիկներին ծանոթացնել անհետաձգելի ոգնություն ցույց տալու յեղանակների հետ, փորովինետև առանց այդ բաները սովորելու, նրանք չեն կարողանալ վոչ զաղարեցնել արյունահոսությունը և վոչ ել ոգնությունը և վոչ ել ոգնություն ցույց տալ այս կամ այն փոսկորը կոտրվելու և այլ դեպքում:

Առողջապահական բջիջը բժշկի ու սան-աշխատակիցների հետ միասին պետք ե կազմակերպեն առաջին ոգնության խմբակները: Այդ խմբակներում կոլխոզնիկը փորոշ գիտելիքներ ե ձեռք բերում, փորոնք պետք կդան թե առորյա կենցաղում, թե ամենորյա աշխատանքներում և թե այն ժամանակ, յերբ նրան պետք լինի գենքը ձեռքին պաշտպանել իր խաղաղ աշխատանքն իմպերիալիստական հարձակումներից:

Առողջապահական բջիջը պետք ե լուրջ ուշադրություն դարձնի նման խմբակների կազմակերպման վրա և աջակցի բժշկական պերսոնալին՝ աշխատանքն անցկացնելու: Հարկավոր և կոլխոզնիկներին պարզաբանել նախնական ոգնության նշա-

նակության մասին, ցուցակագրել զբանով զբաղվել ցանկացաղներին, համաձախության գալ բժշկի կամ սան-աշխատակեցի հետ պարագմունքի որերի մասին, վորը և հաղորդել կոլխոզնիներին և այլն:

Խմբակում սովորած կոլխոզնիկը կկարողանա մինչև բժշկի գալն անհետաձեկի ոգնություն տալ և այսպիսով կփրկե մնամակողի առողջությունը, թերևս և կյանքը:

Այդ խմբակների կազմակերպման գործին կարող ե մեծ ոգնություն ցույց տալ Ռուսաստանի Կարմիր Խաչի ընկերությունը (ՌԿԾ-ը): Հարկավոր ե՝ կապ հաստատել ՌԿԾ-ի ամենամասիկ բժիշի հետ և միացյալ ուժերով կարգավորել գանխմբակների աշխատանքները:

Առողջապահական բջիջը պետք ե նաև հոգ տանի, վորպեսզի այն կոլխոզնիկը, վորը կարող ե ցույց տալ առաջին ոգնությունը, իր ձեռքի տակ ունենա համապատասխան մատերիալները: Դրա համար հարկավոր ե ունենալ պահեստի փոքրիկ դեղարկղ (առեւկա) այն բոլոր սան-կետերում, ուր մեջենայի վրա բավականաչափ մարդիկ են աշխատում:

Այսպիսի դեղարկին իր մեջ պարունակում ե անհրաժեշտ գեղորայք՝ բամբակ, մառլա, վիրակասի յուղ և այլն: Այդ բոլոր դժբախտ պատահարների դեպքում կարող ե մեծ ոգնություն ցույց տալ: Դեղարկը կարելի յէ գնել կամ պատրաստի, կամ պատրաստել մոռակա բժշկական հիմնարկներում և պահել պահարանում կամ պայուսայիկում:

Սակայն գեղարկին ոգտագործելու յեն այն՝ կոլխոզնիկները, վորոնք գիտեն, թե ինչպես պետք ե հասցնել առաջին ոգնությունը:

Աշխատանքի առողջացումը կոլխոզներում նշանակալից հառաջադիմություն ե կոլխոզնիկների առողջապահության գործում: Սակայն մենակ այսքանը քիչ ե: Մեծ նշանակություն ունի նաև կոլխոզնիկների մնունքը, բնակարանային պայմանները, վարակիչ ախտերի դեմ պայքարը և այլն: Գյուղատեսական արտելի տիպար կանոնադրության մեջ ևս նախառենքած ե կենցաղային աշխատանքի կարևորությունը: 1930 թ. փետրվարին հաստատված այդ կանոնադրության մեջ առված ե՝ պետք ե բոլոր հնարավոր միջոցներով բավարարել արտելի անդամների և մասնավանդ կանանց և յերեխաների կենցաղային պայմանները:

Այսպես, ուրեմն, աշխատելու հնարավորությունը կա և առողջապահական բջիջը չպիտի սահմանափակվի միայն աշխատանքի առողջացումով, այլ պետք ե վոչ պակաս ուշագրություն դարձնի կոլխոզի կենցաղի բարեխավման վրա:

Կենցաղի առողջացման աշխատանքը շատ ընդարձակ ե ու բազմատեսակ: Նա ընդգրկում ե կոլխոզնիկի կյանքի բոլոր կողմերը, հետևաբար առողջապահական բջիջի առաջ բացվում ե ընդարձակ ասպարեզ՝ թե իրեն՝ կոլխոզնիկի և թե նրա ընտանիքի կյանքում առողջապահական սկզբունքներ մտցնելու համար:

Կոլխոզում աշխատանքի ուղիղ կազմակերպման հետ սերտ կապված ե նաև:

2) ԿՈԼԽՈԶՆԻԿԻ ՄՆՈՒՆԴԸ

Ամեն մի գյուղացի գիտե, թե ինչ մեծ նշանակություն ունի մնունքը մարդու առողջության ու աշխատունակության համար:

Մարդու բոլոր որգանները (սիրտը, թոքերը, ստամոքսը, ուղեղը և այլն), քանի նա դեռ կենդանի յե, գործում են և տարօւթյուն են արտադրում: Բայց դրանից, մարդս աշխատում ե և այդ աշխատանքի միջոցին չափազանց մեծաքանակ եներգիա (ուժ) եւ վատնում: Այս բոլորի համար անհրաժեշտ ե եներգիայի աղբյուր ունենալ, այսինքն տաքություն և ուժ մատակարարող վառելանյութ ունենալ:

Մարդու որգանիզմի համար այդպիսի վառելանյութ ե հանդիսանում մնունքը: Պարզ ե, վոր մարդս ինչքան շատ ե աշխատում և վորքան ծանր ե նրա աշխատանքը, այնքան ել շատ մնունք ե հարկավոր նրան:

Մինչև հիմա ինչպես եր դրված գյուղացու մննդառության գործը:

Դեռ ցարական ժամանակներում բժիշկները մատնացույց եյին անում, վոր գյուղացիության ճնշող մեծամասնությունը մշտապես կիսաքաղցած եր մնում: Զքավոր կամ միջակ գյուղացին, շնորհիվ իր փոքրիկ գյուղացիական տնտեսության և մեքենաների բացակայության, քիչ յեկամուտ եր ստանում: Այդ յեկամուտը չեր բավում հարկերը վճարելու, տնտեսությունը պահպանելու, հագուստեղեն ձեռք բերելու ու այլ ծախսերը հոգալու համար: Գյուղացին հարկադրված եր լինում իր բերանից կտրել և վաճառքի համել հացի, յուղի, հավիկիթի

այլ մթերքների մի մասը, վորպեսզի դրամ ունենա իր ամենա-
անհրաժեշտ կարիքներն ապահովելու համար, Սրա հետևանքով
մեծապես տուժում եր գյուղացու առողջությունը:

Հեղափոխությունից հետո, յերբ կալվածատերերի հողերն
աշխատավոր գյուղացիության ձեռքն անցան, զյուղացիական
տնտեսությունն ավելի շատ մթերքներ սկսեց արտադրել և
այդպիով գյուղացիության մննդառությունը վորոշ չափով
բարելավվեց: Բայց և այնպես, մանր տնտեսության մեջ, մե-
քենաների ու աշխատավոր ձեռքերի պակասության պատճա-
ռով, գյուղացին աշխատելիս ելի շատ եներգիա յե վատնում:
Այդպիսի աշխատանքն ավելի մեծ քանակությամբ սնունդ և
պահանջում:

Մանր տնտեսությունը վոչ կարող ե և վոչ ել հնարավո-
րություն ունի կիրառելու գիտության այն նվաճումները, վո-
րոնք հնարավոր են դարձնում տնտեսությունը լավ հիմքերի
վրա դնելը: Այդ պատճառով գյուղացիների հողը քիչ բերք ե
տալիս. կովը քիչ կաթ ե տալիս, հավա ուշուշ ե ածում և այլն:

Մթերքներ քիչ են ստացվում և գյուղացու մննդառու-
թյունը մինչև հիմա յել անբավարար ե: Բայց այս դեռ բոլորը
չե:

Առողջարար մննդառության համար կարեոր ե վոչ միան
մթերքների քանակը, այլ նաև ճաշի կանոնավոր պատրաստումը
և ժամանակին ուտելը: Գյուղական ընտանիքում սովորաբար
սնունդը յերբեմն առատ ելինում, յերբեմն ել՝ ցամաք հաց:
Աշնանը և ձմեռվա սկզբին մթերքները շատ են լինում, իսկ
ձմեռվա վերջը, մանավանդ ամառվա, աշխատանքի ամենայե-
ռուն ժամանակը, մթերքներն արդեն պակասում են և գյու-
ղացին կիսակուշտ ե որն անցկացնում: Բացի դրանից, գյուղա-
ցին աշխատանքային յերկարատե որվա ընթացքում բավարար-
վում ե մի կտոր ցամաք հացով ու ջրով, իսկ աշխատանքից
հետո, յերբ տուն ե գառնում, չափից դուրս շատ ե ուտում:
Նմանապես և տոն որերին կուշտ ուտում են ճարպալից կերակուր-
ներ, իսկ լի որերին ուտում են չոր ու ցամաք, ինչ վոր գտնվի:

Տարվա այս կամ այն յեղանակին, տոն և աշխատանքի ու-
րեմին այսորինակ աննորմալ մննդառումը շատ վնասակար ե
լինում առողջության համար:

Ուտելու ժամանակ ստամոքսի պատերն արտադրում են
ստամոքսային հյութ, վորով մարսվում և վերամշակվում ե
սնունդը և վորի սնուցիչ հյութերը վերջը ներծծվում են ար-

յան մեջ: Միանվագ մեծ քանակությամբ սնունդ գործածելուց
առաջ ե գալիս ստամոքսի պատերի ընդլայնում: Այդ ընդ-
լայնում արգելք ե հանդիսանում ստամոքսային հյութի կա-
նոնավոր արտադրմանը և խանգարում ե մարսողությունը:

Կանոնավոր մարսողության համար մեծ նշանակություն
ունի նույնպես տաք սնունդը, վորովինետե և նպաստում և
ստամոքսային հյութի արտադրմանը:

Վերջապես, ճաշի մաքուր պատրաստելը և առանձին ամա-
նից ուտելին ապահովում ե մարդուն վորովայնային ախֆից
(հարինքից), թոքախտից և ուրիշ հիվանդություններից:

Մննդառությունը կոլխոզներում կանոնավորելու համար
առողջապահական բջիջն այդ բոլորը պետք ե հաշվի առնի:

Կոլեկտիվ տնտեսություններում մեքենաների կիրառման,
աշխատանքի արտադրողականության բարձրացման և գործի
կանոնավոր գորվածքի հետեանքով մեծանում ե տնտեսության
յեկամտաքերությունը: Այսպես, որինակ, կենտրոնական Վիճա-
կադրական վարչության հաշվառումով, 1928 թվին անհատա-
կան տնտեսություններում ամեն մի անձին զուտ յեկամուտ
մում ե 50 ո., իսկ կոլխոզներում — 115 ուրիշ, այսինքն ա-
վելի քան յերկու անգամ շատ: Այսպիսով կոլխոզներում հա-
րավորություններ շատ կան սնունդը բարելավելու և գյուղա-
ցիության մշտական կես-կուշտ վիճակին վերջ տալու, միայն
թե հարկավոր ե հոգ տանել սննդառության կանոնավոր կազ-
մակերպման մասին:

Ամենից առաջ բջիջը պետք ե ամեն ջանք գործ դնի կար-
գագորելու հասարակական սնունդը կոլխոզների: Ամեն մի ըն-
տանիքի համար առանձին ճաշ պատրաստելն ավելորդ ժամա-
նակ ե խլում և շատ մթերք ե պահանջում: Որինակ՝ 100 ըն-
տանիքի (մոտ 400—500 հոգու) ճաշ պատրաստելու համար
բավական ե ազատել 5—6 հոգի և նրանք կկարողանան այդ
գործը գլուխ բերել: Իսկ յեթե ամեն մի ընտանիքում առան-
ձին ճաշ պատրաստեն, այն ժամանակ 100 մարդ յուրաքան-
չուր որ կորցնում ե մի քանի ժամանակաշի մասսայական պատ-
րաստումը վոչ միայն ձեռնտու յե և շահավետ, այլ և ոդտա-
կար ե:

Գեղջկուհին չգիտե պետքին պես ճաշ պատրաստել, հետե-
վարար մթերքների մննդականության մի մասը կորչում ե,
մինչդեռ հասարակական սննդառում դեպքում շատ հեշտ կեր-
պով կարելի յե պատրաստել լավ վորակի և մննդարար կերա-
կուրներ:

Մեծ անտեսության մեջ բոլորովին դժվար չեւ նախորոք պատրաստել բավականաշափ կենսամթերքներ և հավասարապես մասնագրել այն ամբողջ տարվա համար, վորպեսզի աշնանը կերկով զիննն, իսկ ամառը կես-կուշտ չմնան: Բացի դրանից, ամեն մի կինմարդ չպիտե մաքուր և համեղ կերակուրներ պատրաստել, իսկ հասարակական խոհանոցներում ճաշ յեփողները լինում են գործին լավ ծանոթ կանայք:

Վերջապես, գյուղական տներում շատ քիչ են պատահում տունձին խոհանոցներ: Կերակուրներից առաջացող գոլորշին, ծովսը և նեխված ավելցուկների հոտը միանգամայն թունավորում են գյուղացու խրճիթը, մինչդեռ հասարակական խոհանոցներում այդպիսի բաներ չեն կարող լինել: Այն կոլխոզներում, ուր դեռ գոյություն չունի հասարակական մննդամատակարառութը, առողջապահական բջիջի անդամները կոլխոզի վարչության նիստերին պետք եւ հարց բարձրացնեն, վորպեսզի առաջին իսկ հասարակության գետքում անմիջապես հասարակական ճաշարաններ կազմակերպվեն: Այդ մասին հարկավոր ե խոսել և կոլխոզնիկների ընդհանուր ժողովում և թե առանձնապես լուրաքանչյուր կոլխոզնիկի հետ: Պետք ե նամանավանդ կանանց բացատրել հասարակական մննդամատակարարման նշանակությունը, հարմարությունը և ոգուտը, վորի շնորհի գեղջկուհին ազատվում ե յեփել-թափելուց:

Հասարակական ճաշարանները կազմակերպելուց հետո առողջապահական բջիջների համար աշխատանքի լայն ասպարեզ ե բացվում:

Բջիջի անդամները պետք ե մշտապես՝ հակողություն ունենան մթերքների պահպանման մասին, վոր նրանք չփշանան և չկորցնեն իրենց արթեքը: Հարկավոր ե հետեւ մթերքների կանոնավոր բաշխմանը, վորպեսզի ճաշը պատրաստված լինի խառն այսինքն՝ և բանջարեղեն և մսեղեն և ձկնեղեն:

Հարկավոր ե հետեւ խոհանոցի մաքրությանը, ամանեղենները հարկավոր ե մաքուր լվանալ, իսկ մթերքները պետք ե ծածկված պահել, վոր ճանձերը չկեղուուեն: Պետք ե նաև աշխատել, վոր հասարակական ճաշարաններում ընդհանուր պնակներ չգործադրվեն: Յուրաքանչյուր ճաշողի համար պետք ե լինի առանձին պնակ կամ ախտե:

Այն ուժեղ կոլխոզներում, ուր տնտեսությունն արդեն վորոշափով կանոնավորված ե և ուր յերեխաների թիվն եւ շատ ե, առողջապահական բջիջը պետք ե հոգ տանի մանկա-

կան հատուկ սննդառության մասին և ըստ հնարավորության կազմակերպե այն:

Սյդ բոլորով դեռ չի վերջանում ուղիղ մատակարարման խնդիրը կոլխոզներում: Ամառը համարյա բոլոր կոլխոզնիկները դաշտում են աշխատում, իբենդ տնից կամ հասարակական ճաշարաններից հեռու, այդ պատճառով չպիտի կարողանան ոգտվել տաք կերակուրներից:

Առողջապահական բջիջը պետք ե նախորոք հոգացողություն ունենա տաք կերակուրները դաշտ՝ աշխատանքի վայրը հացնելու:

Դրա համար ձմեռվա կեսին հարկավոր ե խրճիթ-ընթերցարանում և զանազան ժողովներում կազմակերպել քաջիկի կամ գյուղուառուցչի և խրճիթվարի դասախոսություններ՝ տաք կերակուրների նշանակության մասին ամառային աշխատասքների ժամանակ:

Սյապիսով հասարակական կարծիք կազմելուց հետո առողջապահական բջիջը պետք ե կազմի այդ աշխատանքների կազմակերպման պլանը:

Պլանում պետք ե ընդգծված լինեն հեռավոր աշխատանքի բոլոր կետերը, բանվորների քանակը, ճաշ պատրաստելու կաթսաների և այլ ամանների քանակը, շենքը, ուր պիտի ճաշեն բանվորները, ընդհանուր խոհանոցից աշխատանքի վայրը՝ տաք ճաշ հացնելու միջոցները և այն և այն: Այն կոլխոզներում, ուր աշխատողները նշանափոր թիվ են կազմում և մեծ խմբերով գլխավոր խոհանոցից շատ հեռու յեն գտնվում, հարկավոր ե նույնպես մտածել, թե արդյոք աշխատանքի այդ վայրերում ժամանակավոր խոհանոցներ կազմակերպելն ավելի ձեռնտու չե, քան ամեն որ այնտեղ նաշ փոխադրելը:

Աշխատանքի պլանն ուշադրությամբ կազմելուց և կուտկենցաղային նիստում քննարկելուց հետո, ձմեռվա վերջին հարկավոր ե ներկայացնել այն կոլխոզի վարչության հաստատմանը և աշխատել վորպեսզի պլանում նախատեսնված միջոցառումներն իր ժամանակին իրագործվեն:

Նշանակելի բարելավում կմտցնի կոլխոզնիկների կենցաղում բջիջի այդպիսի աշխատանքը, քանի վորնա սահմանափակված չի լինի միայն տաք կերակուրների ոգուտի մասին ճառելով, այլ կյանքում կկիրառի նախադասական պլանը: Դրա հետ միասին կոլխոզնիկները համարյա մասնակիութեամբ լոր բջիջն իր գործունեյությամբ մեծ ոգուտ ու համարում նախապես և բջիջի հետ ՀՍԸՌ-ՑՈՒ. ՀՕ. ՀՀ

տագա աշխատանքներում նրանք մեծ աջակցություն ցույց կը տան:

Բջիջի ամբողջ գործունեյությունն, ինչպես սննդի բարելավման, այնպես ել այլ տեսակի աշխատանքների նկատմամբ պետք է անցկացվի մոտակա բժշկի ցուցմունքներով ու խորհուրդներով։ Բժիշկը պետք է խորհուրդ տա, թե ինչպես հարկավոր ե դասավորել մթերքները, ինչպիսի կերակուրներ պատրաստել, ինչպես պահել մթերքները, պատրաստել ճաշացուցակը, ինչպես կազմակերպել ամանեղենների լվացումը, վորպեսզի հիվանդության վարակումը մեկից մյուսին չանցնի, ինչպես կարգի բերել յերեխաների սննդամատակարարման գործը և այլն։ Այսորինակ խորհուրդը կողնի, վոր պետքին պես և խոհեմաքար ոգտագործվեն յեղած կենսամթերքները, ուղիղ կաղմակերպվի ամբողջ գործը, վորով և շատ մեծ ոգուտ կստացվի։

Բացի սննդառությունից, կոլխոզի կյանքի բարելավման համար մեծ նշանակություն ունի նաև՝

3) ԲՆԱԿԱՐԱՆԸ,

Վորովինետև նա մեծ աղդեցություն ունի մարդու առողջության վրա։ Բնակարանի պիտանիության առաջին նշանը — նրա բավականաչափ ընդարձակությունն եւ Խրճիթի մեծությունից կախված ե շնչելու ողի քանակը, ինչպես նաև անհրաժեշտ կանկարամիները տեղափորելու ու ամեն մեկի համար առանձին մահճակալ գնելու նարավորությունը։

Միջին չափի գյուղացիական խրճիթը պիտի ունենա 6-7 մետր յերկարություն և 6 մետր լայնություն, այսինքն միջին հաշվով 40 քառակուսի մետր։

Գյուղացու խրճիթի մոտ քառորդ մասը բռնում են վառանն ու միջապատերը, հետեւվապես, բնակելի պիտանի տարածություն մնում է մոտ 30 մետր։ Այսինչ առողջապահական նորմաների համաձայն, առողջությունը չվտանգելու համար ընտանիքի ամեն մի անդամին հարկավոր ե 8 և 1/4 մետր տարածություն։ Ուրեմն պարզ ե, վոր գյուղական խրճիթը շատ նեղվածք ե ու հարմարությունից զուրկ։ յուրաքանչյուր անդամի համար մահճակալ գնելու տեղ չի լինում, այդ իսկ պատճառով ել քնում են կամ վառարանի կամ հատակի վրա։ Սա դիր բոլոր չի։

Օրվա պայերկու ժամը գյուղացին իր խրճիթումն ե անցկացնում, այսինքն կյանքի կեսը։ Մեծ նշանակություն ունի

մաքուր ողը, վոր նա շնչում եւ Գյուղացու խրճիթում ընդհանրապես խոհանոցը բաժանված չե բնակելի մասից։ Խոհանոցի գոլորշիներն և ծուխը, կերակրի հոտը, ինչպես նաև աղբաջրերի տաշտակներից առաջացող վնասակար գաղերը թունավորում են խրճիթի ողը։

Հենց նույն տեղումն ել չորացնում են թաղիքի վոտնամանները, յերեխաների լաթեղենները և այլ իրեր, վորոնք նույնպես ապականում են ողը։

Բացի գրանից, մարդու շնչառության ու քրտնքի գոլորշիացման ժամանակ առաջ են գալիս վսասակար գաղեր, վորոնց հետևանքով խրճիթի ողը միշտ ապականվում ե։

Յեկ վերջապես, խրճիթում ողն ընդհանրապես քիչ ե լինում։ Ցուրաքանչյուր անդամին, ինչպես արդեն ասացինք, ընկնում է 6—7 քառակուսի մետր տարածություն, իսկ խրճիթի բարձրությունը միջին հաշվով լինում է 2½ մետր, հետևաբար ամեն մի անդամին համար մետր ող։ Առողջապահական նորմաների համաձայն, վորը վորոշված ե առողջապահական կոմիսարիատի կողմից, հասակավոր մարդու համար պահանջվում է 30 խորանարդ մետր, իսկ յերեխաների համար 20 խ։ մետրից վոչ պակաս, այնինչ գյուղական խրճիթում ողը շատ ավելի քիչ ե, յեղածն ել չափից դուրս ապականված։ Այդ բոլորը մեծապես անդրադառնում ե գյուղացու ընտանիքի անդամների առողջության վրա։ Առանձնապես տուժում են յերեխաները, վորոնք ավելի շատ են ժամանակական կացնում խրճիթներում, քան մեծերը և վորոնք թարմ և մաքուր ողի ավելի մեծ կարիք են զգում նորմալ զարգացման և աճման համար։

Նեղիկ խրճիթում կեղտը մշտական ե, իսկ ուր վոր կեղտ կա, այնտեղ ել լիքը միջատներ ու պարազիտներ են, վորոնք վարակիչ հիվանդությունների տարածողներն են։ Ամենքին ել հայտնի յե, վոր բժավոր տիֆը (կամ ինչպես գյուղումն են ասում, «զլիսի» տիֆը) սովորաբար վոջիլների միջոցավ ե տարածվում։

Մեզ մոտ տարին հագարավոր մարդ ե հիվանդանում բժավոր տիֆով, հարյուրավոր մարդիկ մահանում են այդ հիվանդությունից և զրան մեծապես նպաստում ե բնակարանի կեղտու լինելը։

Գյուղացին շինում եր նեղիկ և հակառակապահական բնակարան, վորովինետև ամեն մի ընտանիքի, ամեն մի ոջաղի

համար անհրաժեշտ եր ունենալ և խրճիթ՝ իր խոհանոցում, և գոմ և մարագ և այն և այն,

իսկ այդ ամենի համար մեծ միջոցներ եյին պահանջվում, ուստի և զյուղացին ստիպված եր լինում կառուցել նեղիկ ու փոքրիկ բնակարան, այսինքն տնտեսում եր ի վնաս իր առողջությանը:

Գյուղացին ապրել եր բնակարանային վատ պայմաններում, ընտելացել եր նրանց. նա չգիտեր, թե այդպիսի բնակարանը վնրքան վնաս և հասցնում և կարծում եր, վոր դրանից լավը պետք ել չե («Ճեղը նեղ, սիրտը լեն»):

Առողջապահական բջիջը պետք ե հոգ տանի այն մասին, վոր փոխե յեղած գրությունը և բարելավե կոլխոզիկների բնակարանային պայմանները: Շատ տեղերում — խոշոր կոլխոզներում արդեն կոմունաներ և հասարակական ճաշարաններ են կազմակերպվում և մարդիկ ավրում են հանրակացարաններում: Ապրելու առողջ պայմաններ այստեղ ենշտ և կազմակերպել, վորովհետև բնակելի սենյակներում ճաշ չեն պատրաստում (զրա համար գոյություն ունի հասարակական խոհանոցը), անասունների համար թողած՝ ուտելեղենների ավելցուկներով լցված ամաններն այնտեղ չեն դրվում, ձիասարքն ել այստեղ չի պահպում (վորովհետև դրանց համար առանձին շենքեր կան):

Առողջապահական բջիջը պետք ե հոգ տանի, վոր հանրակացարանների կառուցման ժամանակ հաշվի առնվեն առողջապահական բոլոր անհրաժեշտ պահանջները:

Այդ պահանջները հետեւալում են կայանում. շենքը պետք ե կառուցվի բարձր և չոր աեղում, վորպեսզի պատերը խոնավ չլինեն, վորովհետև խոնավությունից վոսկրացավ և այն հիվանդություններ են առաջ գալիս, իսկ շենքը կարճ ժամանակում փառում ե:

Լուսամուտները պետք ե նայեն հարավ, կամ հարավարեկը, վորպեսզի սենյակները լավ լուսավորված լինեն: Լուսամուտներում պետք ե անպատճառ ողանցքեր թողնել՝ սենյակների ողը մաքրելու համար: Հանրակացարանում ամեն մի ավրող պետք ե ունենա իր համար անհրաժեշտ տարածությունը և ողի հարկավոր քանակը: Հանրակացարանում, ուր մարդիկ իրենց ապրած սենյակներում վոչ ճաշ են պատրաստում, վոչ ուտում, վոչ աշխատում և վոչ ել տնտեսության վերաբերյալ գույքեր են պահպում, մարդագլուխ ավելի քի-

տարածություն և պահանջվում, քան վերեռում նշված առողջապահական նորմաներով:

Պետք ե լինի ընդհանուր և լուսավոր միջանցք, լվացարան և լավ սարքավորված արտաքնոց՝ բավականաչափ նստատեղերով:

Եյս բոլորը պետք ե նախատեսնել պլանը կազմելու ժամանակ և բջիջի անդամները մենակ չեն կարող այդ ինդիք տակից գուրս դար: Դրա համար ել բջիջը պետք ե ամեն ջանք գործ զնի կոմունայի խորհրդում, վոր հանրակացարանի կառուցումն սկսելուց առաջ նրա պլանն սառուցված լինի սանիտարական բժշկի կողմից: Բջիջը չպետք ե բայց թողնի հարմար ժամանակը՝ բնակարանի առողջացման վերաբերյալ այդ կարեվոր աշխատանքը տանելու համար:

Բայց այդպիսի նոր շենքերի կառուցման դեպքերը կոլխոզներում գեռ հաճախակի չեն: Ներկայումս միջոցները քիչ են և հանրակացարանների համար նախկին կալվածատերերի տներն ու վանքերը և այլ շինություններն են հարմարեցվում, իսկ կոլխոզնիկների մեծ մասն ապրում ե իրենց հին խրճիթներում: Այդպիսի դեպքերի համար ևս բջիջին անելու բան շատ ե մնում:

Վնրքան վատ և բնակարանը, վնրքան նեղվածք են ապրում, այնքան շատ պետք ե հոգ տարվի տան կարգապահության մասին, այն մասին, վոր քիչ լինեն առողջապահությանը վնասարեր դեպքերը:

Ցուրաքանչյուր հանրակացարան անհրաժեշտաբար պետք ե ունենա սանիտարական ներկայացուցիչ, վորը հոգ տանելու յե բնակարանի սանիտարական վիճակի մասին: Ցանկալի յե, վոր այդ լիազորն առողջապահական բջիջի անդամներից մեկը լինի: Այդ դեպքում բջիջը հանրակացարանի գործերին միշտ լավ տեղյակ կիմնի և մեծ աղքեցություն կունենա նրա բարեկարգության վրա:

Սանիտարական լիազորը պետք ե հետեւի միջանցքների, արտաքնոցի, լվացարանի և ընդհանուրի գործածության համար կառուցված այլ շենքերի մաքրությանը: Դրա համար հարկավոր ե մշակել հանրակացարանի մաքրման կարգը և հետամուտ լինել նրա իրազործմանը, արգելել հատակին թքելը, հարկավոր տեղերում թքամաններ զնել միջանցքում և սենյակներում սդանցքեր ունենալ, թույլ չտալ սենյակներում թաղիքի կոշիկներ ու վոտափաթթոցներ չորացնելու և հետեւ, վոր միշտներ չտալ ջանանան:

Գյուղացիները դեռ ամենքը սովոր չեն նման կարգերին և հաճախ չեն պահպանում նրանց, համարելով այդ բոլորը մի ինչ վոր քմահաճություն և առողջությունը պահպանելու նը-կատմամբ վոչ մի նշանակություն չունեցող բաներ։ Սանիտա-րական լիազորը լերեմն պետք է հանրակացարանում ապրող-ների ընդհանուր ծողով գումարի՝ բժշկական աշխատակցի զե-կուցումը լսելու շնչքերի մաքրության նշանակության մասին և կոլխոզնիկների հետ համաձայնության գալու յեղած բացերը վերացնելու համար։

Հանրակացարանում միջատներ առաջանալու դեպքում անհրաժեշտ ե աշխատել, վոր անկողնի բոլոր սպիտակեղենը լվացվի, անկողինները խնամքով մաքրվեն. միևնույն ժամանակ պետք է միջատների դեմ ձեռք առնվելիք միջոցների մասին բժշկի հետ խորհրդակցել։

Բացի հանրակացարանի սանիտարական դրությանը հե-տեւու աշխատանքից, սանիտարական լիազորը պետք է հոգ տանի հանրակացարանում ապրելու տեղեր հատկացնելու խնդրի մասին։

Նա, առողջապահական բջիջի միջոցով, պետք է ջանադիր լինի կոմունայի խորհրդում կամ հանրակացարանի տեղերի բաշխումը կարգավորող ուրիշ մարման, վոր հանրակացարանը չափից դուրս չցվի, իսկ վարակիչ հիվանդություն (թոքախտ) ունեցողները, վորքան այդ հնարավոր ե, առանձնացած վորք-րիկ սենյակներ ստանան և այլն։ Այն կոլխոզներում, ուր գյուղացիներն ապրում են իրենց խրճիթներում, բնակարանի սանիտարական դրությանը հետևելու ահազին դժվարությունն է ներկայացնում, թեև այստեղ ևս կարելի յէ վորոշ գործ կատարել։ Կոլխոզներում լծկանի հանրախացման, ինչպես նաև հասարակական մննդառության կազմակերպման դեպքում խրճիթներում այլ ևս վնչ ձաշ են պատրաստելու, վնչ հորթ ու ծիասարք են պահելու և վնչ ել անասունների համար կե-րակրի ավելցումներն և աղբաջրերն են հավաքելու։ Այդ բո-րբը վորոշ չափով կողնի բնակարանի բարելավմանը։

Առողջապահական բջիջը պետք է համաձայնություն կայացնի բժշկի հետ՝ բնակարանի առողջության նշանակության մասին կոլխոզնիկների հետ զրուցյներ կազմա-կերպելու համար, նա պետք է մրցակցություն հայտարարե խրճիթը մաքուր պահելու և ոդանցքեր ունենալու համար։ Առանձնապես անհրաժեշտ է ուշադրություն դարձնել բնակա-րանի առողջացման պրոպագանդի վրա, մանավանդ կանանց

շրջանում, քանի վոր խրճիթի մաքրությունն առավելապես նը-րանցից ե կախված։

Բջիջը պետք է հոգ տանի այն մասին, վոր գյուղացին իմանսա, թե բնակարանը ինչ ազդեցություն ունի մարդու ա-ռողջության վրա և այնպես անի, վոր նա հետաքրքրվի այդ հարցով, միայն այդ գեպքում հնարավոր կլինի առողջապա-հիկ վիճակի հասցնել անհատ գուղացու խրճիթը։

Բնակարանի առողջացման հետ սերտորեն կապված է նաև՝

4. ԿՈԼԽՈԶԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ

Հին գյուղը շատ անհրապույր կերպարանք ուներ։ Խըր-ճիթներ, ցածլիկ, փոքրիկ լուսամուտներով, փոքրիկ, կեղտոտ բակեր, անկարգորեն այս ու այն կողմը շենքերով բռնված աղտոտված ջրով ու վատ սարքավորված ջրոր, նեղիկ փո-ղոցներ՝ փոքրաքանակ ծառատունկով և աղբի խոշոր կույտե-րով լի—ահա թե ընդհանրապես ինչ եր ներկայացնում իրե-նից ուսւ գյուղը։ Այդ վիճակին պետք է վերջ տրվի։

Նոր կուեկտիվ գյուղը պետք է բարեկարգված լինի, պետք է պլանով կառուցվի և ապրելու առողջ պայմաններ ստեղծվի։

Բոլորը միանդամից չի կարելի փոխել և դրա համար ա-ռողջապահական բջիջը պետք է մտածի վոչ միայն նոր կա-ռուցվող, այլ և գյուղություն ունեցող գյուղերի բարեկարգման մասին։

Ներկայումս, խոշոր կոլխոզների կաղմակերպման կապակ-ցությամբ, շատ տեղերում առաջ են գալիս նոր շենքեր։ Շին-վում են նոր տներ, համայնացած անասունների ու մեջենա-ների համար կառուցվում են շինություններ, փորփում են ջրհորներ։ Բջիջն իր բոլոր ջանքերը պետք է գործ դնի, վոր-պեսզի այդ նոր շենքերը համապատասխան լինեն առողջապա-հական բոլոր անհրաժեշտ պահանջներին։

Կոլխոզի բարեկարգման ամենահրաժեշտ պայմաններից մեկն է հանդիսանում հասարակական լվացատների և բաղ-նիքների կառուցումը։ Մեզ մոտ, գյուղերում, գեռ իր հունձն և տեսնում բժավոր տիֆը, մի հիվանդություն, վորը վոշիլի միջոցով հիվանդից անցնում է առողջին։

Շատ տեղերում բաղնիքները չեն համապատասխանում իրենց կոչմանը. բացի դրանից, նրանք քիչ են—և մարդիկ տանն են լողանում։

Զկան նաև կարգին սարքավորված լվացքատներ, այդ պատճառվ ել խրճիթներումն են լվացք անում։ Այդ բոլորի հետևանքով վոչ միայն խրճիթն ե խոնավանում, այլ պետքին պես չեն յեռացնում սպիտակեղենը և չեն վոչնչացնում ախտը։ Բժավոր տիֆի և այլ հիվանդությունների տարածման պատճառներից մեկը դա յե, հետևապես չպետք ե մոռացության տրվի լավ բաղնիքների ու լվացատների կառուցման հարցը։ Մեծ ուշադրություն պետք ե դարձնել անասունների գոմերի կանոնավոր կառուցմանը և աղբը պահպանելուն։ Գոմի հատակը պետք ե հեղուկների համար անթափանցելի լինի, հետեւ վարար պետք ե բացված լինեն հեղուկատար անցքեր։

Աղբի պահպանման գործն ել պետք ե այնպես կարգավորել, վոր նրա հեղուկ մասը հողի մեջ ծծվի։ Այդ պահանջների անտեսումը նվազեցնում ե աղբի՝ վորպես պարարտանյութի արժեքը և նպաստում ե հողի ապականմանը։

Աղբի պահելու յեղանակը չիմանալու հետևանքով, նրա մեջ շատ հեշտությամբ բաղմանում են ճանձեր և ուրիշ միջատներ, վորոնք և լինում են հիվանդությունների տարածողները։ Այդպիսով անասունների գոմերի անկանոն կառուցումը ֆաս ե հասցնում թե կոլխոզի տնտեսությանը, թե կոլխոզնիկների առողջությանը։

Նոր գյուղերի շինարարության կամ յեղաճների լայնացման ժամանակ առողջապահական բջիջը կոլխոզի վարչությունից պետք ե պահանջի, վոր նկատի առնվեն կոլխոզնիկների առողջության պահպանման շահերը։ Պետք ե առաջուցել, վոր առողջապահության համար յեղած ժախսերն ավելորդ շքեղություններ չեն, այլ անհրաժեշտ ծախսեր են և նրանց ոգուածը հազարապատիկ ավելի յե։

Գյուղի պլանը (փողոցների, բնակելի աների, բաղնիքի, անասունների գոմերի դասավորումը) պետք ե հաստատված լինի սանիտարական բժշկի կողմից և աշխատանքները կատարվում են այդ պլանի համաձայն։

Հասուկ աշխատանք հարկավոր ե գործ գնել ջրամատակարաման գործի բարելավման համար։

Գյուղական ջրհորները մեծ մասամբ անբարեկարգ են։ Նրանք խոր չեն և խմելու համար գործածվում ե ջրի՝ հողից կեղտությամբ՝ վերին շերտը։ Ջրհորի փայտե պատերը հաճախ փափած են լինում և կարգին չեն պահպում։ Դրա համար ել հոսող կեղտու ջրերը ներծծվում են ջրհորի մեջ։ Ջրհորի պա-

տի այն մասը, վոր գետնի յերեսին ե, ցածր ե լինում։ Ջրհորի բերանը կափարիչ չի ունենում և ընդհանուրի գործածության համար գույշ ել չի լինում։

Դրությունը լավ չե և այն գեպքում, յերբ գյուղացիները գետի ջրից յեն ոգտվում։

Գետի մեջ զանազան տեղերից թափվում են կեղտության ջրերը, միևնույն տեղում և լվածք են անում, և անասուններին ջրում, և իրենց խմելու համար ջուր են վերցնում։

Այդպիսի ջուրը շատ վտանգավոր ե առողջության համար։ Վորովայնի տիֆի, արյունախառն փորհարինքի միկրոբները գտնվում են ինչպես այդ հիվանդների արտաթորանքների մեջ, այնպես ել նրանց շորերը լվանալուց հետո կեղտության ջրի մեջ և այն։

Կեղտությամբ հեղուկները թափվում են գետը կամ ներծծվում են անբարեկարգ ջրհորը և վարակում են ջուրը, իսկ մարդիկը վորոնք ոգտվում են այդպիսի ջրից, հաճախ հիվանդանում են վերևում նշված հիվանդություններով։ Ջուր չե, վոր ասում են «առողջ ջուր—առողջ գյուղ»։

Առողջապահական բջիջն այդ բոլորը պետք ե հաշվի առնի և աշխատի, վոր կոլխոզներում մաքուր, առողջարար ջուր լինի։ Նոր կառուցվող շենքերում, կեղտության ջրերից խուսափելու նպատակով, հարկավոր ե այնպես անել վոր ջրհորներն անասունների գոմից և արտաքնոցից 30—35 մետր հեռու փորվեն։ Ջրհորը պետք ե բավականաչափ խորություն ունենա, վորովինետև հողի խոր շերտերում ջուրն ավելի մաքուր ե։

Ավելի յավ ե կառուցել խողովակային ջրհորներ՝ ջրահանմեքենայով (նասոսով)։ Այդպիսի ջրհորներում ջուրը բարձրանում ե ջրատու շերտերից մետաղյա խողովակով։ Նման ջրհորների սարքավորումը համեմատաբար ավելի թանկ ե նըստում և զրա համար ընդհանրապես շինում են փորված ջրհորներ։ Հորը պետք ե պատած լինի կաղնիի, լաստենիի և այլ տեսակի պինդ տախտակներով։

Հորը հարկավոր ե տախտակել այնպես, վոր արանքներ չմնան և վերևի մասը իրար միացնել փայտե սեպերով։ Ջրհորի պատի այն մասը, վոր յերեսին ե, մեկ մետր (մեկ կես արշին) բարձրություն պետք ե ունենա։

Ջրհորի շուրջը սալահատակված ե լինելու թեք ուղղությամբ, թափթփված ջրերը և կեղտը ջրհորից զենը հոսեցնելու համար։ Ջրհորի վրա լավագույն ե բուդկա շինել։

Ել չեմ խօսում այն մասին, վոր ջրհորն անպայման պետք ե ունենա բերանի կափարիչ և ջուր քաշելու մեծ դույլ՝ ընդհանուրի գործածության համար. պատահական դույլերով ջուր քաշելը պետք ե խստիվ արգելված լինի:

Այդ բոլորը պետք ե իրականացնել այն դեպքում, յերբ նոր ջրհոր են փորում: Բայց բջիջը չպետք ե աչքաթող անի նաև յեղած ջրհորների բարեկարգման հարցը:

Հարկավոր ե բժշկի հետ միասին (լավ ե ձմեռվա վերջին) նայել ջրհորներն այն գյուղերում, ուր կոլխոզնիկներն են ապրում: Բոլորովին անպետք ջրհորները հարկավոր ե փակել, իսկ մասածները պետք ե նորոգվեն կոլխոզնիկների ուժերով. այն ժամանակ ջուրն առողջության համար այլևս վտանշավոր չի լինի:

Այն կոլխոզում, ուր գետի ջրից են ոգտվում, հարկավոր ե մտածել գետը թափվող կեղտոտությունների առաջն առնելու մասին:

Առողջապահական բջիջը պետք ե հատկացնի առանձին տեղ՝ մաքուր ջուր վերցնելու (հոսանքից վեր), ինչպես նաև առանձին տեղ՝ անսառններին ջրելու և լվացք անելու (հոսանքից ցած): Գետի յեղերքում փակցված պիտի լինեն համապատասխան հայտարարություններ, բջիջի անդամները կոլխոզի ակտիվի հետ միասին՝ պետք ե ստուգեն այդ վորոշումների կատարումը: Բայց պետք ե ասել, վոր գետի յեղերքի այդորինակ բաժանումը միշտ հնարավոր չե կենապործել: Մեծ գյուղերում բնակչությունն այդ դեպքում ստիպված կը լինի ջրի գնալ գյուղի մեկ ծայրից մյուսը: Բացի դրանից, չի կարելի խմելու համար ողտովել գետի այն ջրից, վորը գյուղին չհասած արդեն կեղտոտված ե: Այդպիսի դեպքերում բջիջը պետք ե պահանջի, վոր գետի ջուրը միմիայն տեխնիկական կարիքների համար գործածի, իսկ խմելու ջրի համար անհրաժեշտ ե ջրհորներ փորել:

Ջրամատակարարման գործի այդպիսի դրվածքը կոլխոզներում լավագույն միջոցն ե հանդիսանում կանխելու այսպես կոչված՝ ջրային ինֆեկցիաները, այսինքն այն վարակիչ հիվանդությունները, վորոնք ջրի միջոցով են տարածվում:

Գյուղի բարեկարգման բոլոր աշխատանքներն, այսինքն պլասի համաձայն կառուցումը, աղբի կանոնավոր պահպանումը, լվացքատան ու բաղնիքի կառուցումը, ջրամատակարգման բարելավումը և այլն ստեղծումը են այնպիսի պայմաններ, վորոնք միջոցով նշանավոր չափով թեթևանում ե:

5. ՎԱՐԱԿԻՉ ԳԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ

Կոլխոզներում վարակիչ հիվանդությունների գեմ պայքարելու հարցը բջիջի մշտական հոգսի առարկան ե հանդիպանալու: Այս կամ այն տարափոխիկ հիվանդությունը (հիվանդությունների բավականաչափ գեղքերը) վտանգ ե սպառնում կոլխոզնիկի վոչ միայն կյանքին և առողջությանը, այլև կարող ե վիժեցնել կոլխոզի տնտեսական պլանը և թուլացնել նրա ուժը: Կոլխոզնիկների առողջության մասին խկանել նրա համար կան հոգատարությունը պետք ե կայանա նրանում, կամ ե իրական հոգատարությունը պետք ե կայանա նրանում, վոր կոլխոզում կյանքի այնպիսի պայմաններ ստեղծվեն, վորոնց շնորհիվ անհնարին լինի այլևս վարակիչ հիվանդությունների ծագումը և նրանց տարածումը:

Վարակիչ հիվանդությունները կանխելու ամենալավ միջոցը հանդիսանում ե ինչպես առողջապահության, այսպես և մնացի ու կոլխոզի բարեկարգման վերաբերյալ միջոցառումների լրիվ ու ճշգրիտ կենսագործումը: Ճանձերը մննդամթերքները կեղտուելով, վորովայնային տիֆ և այլ հիվանդությունները են տարածում:

Առողջի և հիվանդի միևնույն ամանից ուտելու հետևանքով փոխանցվում ե թթվախաը կամ սիֆիլիսը— անա թե ինչու առողջապահիկ մնացի մասին հոգատարությունը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխող անհրաժեշտ պայմանն ե կազմում: Վոչ պակաս նշանակություն ունեն նաև կոլխոզի բարեկարգման համար տարբելիք աշխատանքները: Մաքուր և շապականված ջուրը, լավ լվացարանը և բաղնիքը, աղբի ու այլ պիլցուկների կանոնավոր պահպանումը և դաշտ կրելը— ամենից լավ են արգելք հանդիսանում հիվանդությունների տարածմանը:

